

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մեպտեմբերի 30, 2008թ.

Եպիսկոպոսաց խորհրդակցական հավաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մեպտեմբերի 30-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ եպիսկոպոսաց խորհրդակցական հավաք:

Հավաքը սկսվեց «Հայր մեր»-ով, որից հետո Վեհափառ Հայրապետը, ողջունելով Մյուռնոսօրհնության առիթով Ս. Էջմիածին ժամանած Հայաստանի և Սփյուռքի հայոց թեմերի առաջնորդներին և վանաբնակ բարձրաստիճան հոգևորականներին, Հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նրանց՝ մաղթելով Աստծո գորակցությունն իրենց առաքելության իրականացման գործում:

Հավաքին հրավիրված էր ԱԳՆ Սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի նախագահ տիկ. Հրանուշ Հակոբյանը, որը եպիսկոպոսաց դասին ներկայացրեց ՀՀ Սփյուռքի նախարարության հայեցակարգը: Չեկույցում տիկ. Հակոբյանը հանգամանալից անդրադարձավ նախարարության կառուցվածքին և ապագա ծրագրերին՝ ուղղված Հայաստան-Սփյուռք կապերի զորացմանը, հայապահպանությանը, հայրենադարձությանը և հայ ներուժի համախմբմանը: Չեկույցից հետո տիկ. Հակոբյանը պատասխանեց եպիսկոպոսների հարցերին:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց տիկ. Հրանուշ Հակոբյանին համապարփակ, մանրամասն զեկույցի համար՝ հաջողություններ մաղթելով նախարարության գործունեությանը:

Հավաքի օրակարգում էր նաև թեմական, ծխական տիպային կանոնադրության ուղենիշային փաստաթղթի նախագծի հարցը, որի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի միաբան Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը՝ անդրադառնալով թեմերից ստացված առաջարկություններին:

Օրակարգում ընդգրկված էին նաև Հայ Եկեղեցու քարոզչական առաքելության կազմակերպմանը և ներեկեղեցական կյանքին առնչվող այլ հարցեր: Եպիսկոպոսաց հաջորդ խորհրդակցական հավաքը որոշվեց գումարել առաջիկա տարի նոյեմբեր ամսին:

Հավաքը փակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

###